

Եւ եթէ Չեղ շահագրգռող ո՛ր է բանի մը մէջ կրնանք օգտա-
կար ըլլալ Չեղ, պերճաշուք իշխան, կը խնդրենք որ հաճիք զրեւ մեզ
ամենայն վստահութեամբ:

Տուեալ ի վանս Պորէտ-ի, Յ-րդ օրն սեպտեմբերի, Տեառն մերոյ
ճննդեան 1380 թուին:

ՊԵՏՐՈՍ ԹԱԳԱՒՈՐ

Գուրդերմոս Կալդերոնեան(1), թագաւորին հրամանին համաձայն,
զոր հաղորդեց տէր Մարտինոս՝ Կրտսեր Որդի Նորին արքայաշուք
Տէրութեան:

* * *

Այս թուղթը զրկուելէն ճիշտ ամիս մը վերջ Պետրոս Նոր համակներով
ու հուէրներով եղիպտոս զրկեց իր գետպանը՝ Բոնանատ Սապէրա, կեղծե-
լով որ իբր թէ սուլտանն իր հաճութիւնը տուած ըլլայ, ինչ որ՝ որպէս
թէ՝ իմացեր էր Փ. Սակլոզայի տեղեկագրէն (2): Այս վարպետութիւնները

(1) Արփունի դիւանապետն է անուոս:

(2) Ասիկա իմ ենթադրութիւնն է. բայց սերիօ կերպով ալ կարելի չէր
մեկնել մեկ ամսուան կարն ժամանակամիջոցին մեջ զրկուած եւ իրար լրացնող
երկու քղբեր, մին գրուած 1380 սեպտ. 3-ին, ինչպէս տեսնեմք, իսկ միւսը նոյն
սարւան հոկտ. 3-ին, զոր պիտի տեսնենք: Այն ասեցներն Աղեփանդրիայէն մին-
չեւ Կանիքե երթալ-գալու համար միայն *երեւ շարսթ* կը դնէին. իսկ Բարսե-
լոնայէն մինչեւ Կանիքե՝ առ նուազն երեւ ամսուան համբայ էր: — Բոնանատ
Սապէրայի առաքելութեան նշանները կը հասցասէ Արագոնի քրոնիկագիր մը,
Սուրիսա, հետեւեալ տղերով. « Tambien en esto anno (1377) fue embiado
al Soldan de Babilonia vn cauallero Catalan, que se dezia Bonanat
Çapera, para procurar la libertad del Rey y Reyna de Armenia, y de
sus hijos... » այսինքն՝ « Նոյնպէս այս տարի (1377) Բաբելոնի սուլտանին
զրկուեցաւ Բոնանատ Սապէրա անունով Կասպանցի ստպետ մը, Հայոց քաղաք-
րին ու քաղաքներն եւ իրենց գաւազներուն ազատութիւնը ձեռք բերելու համար... »
(Geronymo Çurita, *Annales de la corona de Aragon*. Caragoça, 1610,
հտ. Բ, քղ. 370 թ): Այստեղ բուսականի սխալ մը կայ, որ պէտք է սրբագրուի՝ 1380:
Քրոնիկագիրը մի եւ նոյն տարին կը դնէ նաեւ Գրիգոր ԺԱ պապին մահը,
ինչպէս եւ Ուրբանոս Է-ի գահակալութիւնը, փոխանակ դնելու 1378-ին: